ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2 մարտի 2024թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

*1.* 2023-24թթ. ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:*/զեկ. Մ.Ա.Զաքրյան/*

*2.* ԵՊՀ ԻՄ "Տարվա ուսանող" ամենամյա մրցույթին մրցույթի մասնակցության թեկնածու առաջադրելու մասին *Ուզեկ. Մ.Ա.Զաքրյան/*

*3.* Դասալսումների կազմակերպման գրաֆիկների հաստատում:*/զեկ. Ամբ. Վարիչներ/*

*4.* Ընթացիկ հարցեր

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 8/1

Հաստատել նիստի օրակարգը:

**Օրակարգի առաջին հարցի՝** «2023-24թթ. ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում» հարցի վերաբերյալ Մ.Զաքարարյանի հաղորդումը հետևյալն էր.

2023-24թթ. ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանին մասնակցել են 60 ուսանողներ: Դրական գնահատականներ են ստացել 41 ուսանողներ, 19 ուսանողներ ստացել են անբավարար: Առաջադիմությունը առաջին կուրսում կազմում է 66,67%,

2-րդ կուրսում՝ 53,33%, 3- րդ կուրսում՝ 83,33% ։ Ընդհանուր առաջադիմությունըկազմում է 68,33% ։

**Արտահայտվեցին**-Գ.Սարգսյանը ,Ա.Հովակիմյանը։

**Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.**

**ՈՐՈՇՈՒՄ 8/2**

**Ընդունել ի գիտություն։**

Օրակարգի երկրորդ՝ «Հաղորդում ԻԿՄ երրորդ կուրսի ուսանողուհ Սահակ Գուլակյանին «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տարվա ուսանող» ամենամյա մրցույթին մասնակցնելու թեկնածու առաջադրման մասին», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը

Զեկուցողը ներկայացրեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհ Սահակ Գուլակյանը վեց կիսամյակ անընդմեջ սովորում է գերազանց, ունի թվով հինգ հրատարակված գիտական հոդվածներ։

Ներգրավվել է

«Տավուշի մարզի որոշ հանրակրթական դպրոցների, հյուրատների և բուժհիմնարկների շրջակայքում աղմուկի ուսումնասիրություն» (ղեկավար՝ Ա. Մարգարյան, թեմայի կատարման համար հատկացվող ժամանակահատվածը 7 ամիս,)գիտահետազոտական խմբում։

ԵՊՀ ԻՄ Բնագիտության ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանող Սահակ Գեղամի Գուլակյանը 2023 թ. Դեկտեմբերի 30-ին Ռուսաստանի Նիժնի Նովգորոդ քաղաքում անցկացված «Տարվա ուսանող 2023» միջազգային մրցույթի 5 անվանակարգում արժանացել է տարբեր կարգի դիպլոմների.

- ✓ «Երիտասարդ նորարար» անվանակարգում 1-ին կարգի դափնեկրի դիպլոմ,

- ✓ «Տարվա էկոլոգիական պաշտպան» անվանակարգում հաղթողի 2-րդ կարգի դիպլոմ,
- ✓ «Տարվա միջազգային ուսանող», «Երիտասարդ հետազոտող» և «Տարվա բէկում», անվանակարգում հաղթողի 3-րդ կարգի դիպլոմ:

ԵՊՀ ԻՄ-ի՝ 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակում ստանում է **«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ»** անվանական կրթաթոշակ:

Ընդգրկված է ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրերի 1.2 խնդրի/Մրցունակ կրթական ծրագրեր/ 11-րդ գործողության/ մասնաճյուղի կրթական ծրագրերը հավատարմագրման /իրականացման համար ձևավորված կրթական ծրագրերի ինքնավերլուծությունը իրականացնող աշխատանքային խմբում:

ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի անդամ է:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**- Ա.Հովակիմյանը, Գ.Սարգսյանը, Մ.Զաքարյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

**ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.**

**ՈՐՈՇՈՒՄ 8/3**

Ներկայացնել ԻԿՄ երրորդ կուրսի ուսանողուհ Սահակ Գուլակյանին մասնակցնելու «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տարվա ուսանող» ամենամյա մրցույթին :

**Օրակարգի երրորդ հարցի ՝ «**Դասալսումների կազմակերպման գրաֆիկների հաստատում**»** վերաբերյալ Ծ/ԻՏ ամբիոնի ժ/պ Ա.Ս.Հովակիմյանը, ԸՄԲ ամբիոնի ժ/պ Գ.Ս.Սիմոնյանը: Զեկուցողները ներկայացրեցին 2023-2024 ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասալսումների գրաֆիկները

**Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց**

**ՈՐՈՇՈՒՄ 8.4**

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2023-2024 ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասալսումների գրաֆիկները

**Օրակարգի չորրորդ ՝ «Ընթացիկ հարցեր» հարցի** վերաբերյալ ԸՄԲ ամբիոնի ժ/պ Գ.Ս.Սիմոնյանը առաջարկեց ստեղծել գիտական զեկույցների, թեզերի, հոդվածների պատրաստման, ներկայացման, հրատարակման աջակցության խումբ, հետնյալ կազմով.

1. Սիմոնյան Գևորգ
2. Հովսեփյան կարեն
3. Ազարյան Սերգեյ
4. Հովակիմյան Աննա
5. Օթարյան Քնար
6. Յոլչյան Ռոբերտ
7. Գուլակյան Սահակ
8. Գուլակյան Դիանա
9. Համզյան Արփի

որի նպատակն է աջակցել ուսանողներին մասնակցել գիտաժողովների, օգնել ինչպես գրել հոդվածներ, աջակցել տպագրության գործընթացներում:

**Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց**

**ՈՐՈՇՈՒՄ 8.4**

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել գիտական զեկույցների, թեզերի, հոդվածների պատրաստման, ներկայացման, հրատարակման աջակցության խումբի կազմը

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ______________________ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ____________________Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ